

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2006թ. հունվար-փետրվարին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 24.5 մլրդ.դրամ, որը 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը գերազանցել է 2.7%-ով: 2006թ. փետրվարի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է 2006թ. հունվարի 80.7 %-ը:

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում մարզերի կտրվածքով

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2006թ. հունվար-փետրվար	2006թ. հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %	2006թ. հունվար-փետրվար	2006թ. հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %	2006թ. հունվար-փետրվար	2006թ. հունվար-փետրվարը 2005թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %
	ք.Երևան	0.1	100.0	0.3	100.0	4.3
Արագածոտն	1.3	108.3	4.6	104.5	1.8	90.0
Արարատ	1.1	110.0	3.0	103.4	2.8	90.3
Արմավիր	1.2	92.3	2.6	104.0	2.4	72.7
Գեղարքունիք	1.9	111.8	7.1	104.4	2.8	90.3
Լոռի	1.2	120.0	4.7	104.4	2.3	100.0
Կոտայք	1.4	116.7	4.3	104.9	29.4	84.5
Շիրակ	1.7	113.3	6.0	105.3	2.6	89.7
Սյունիք	0.9	100.0	3.4	106.3	1.0	90.9
Վայոց ձոր	0.4	100.0	1.5	107.1	1.2	85.7
Տավուշ	0.9	112.5	2.7	103.8	1.4	87.5
Ընդամենը ՀՀ	12.1	109.0	40.2	104.7	52.0	81.8

2006թ. հունվար-փետրվարին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, անասնաբուծական հիմնական մթերքի արտադրության ծավալները՝ բացառությամբ ձվի ծավալից, ավելացել են: Այսպես՝ սպանդի համար իրացված անասունի և թռչունի ծավալը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 1.0 հազ. տոննայով, կամ 9.0 %-ով, կաթինը՝ 1.8 հազ. տոննայով կամ 4.7 %-ով:

¹ Ներառյալ ներքին սպառումը: